Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.1-Մ3-5 Ավագ մասնագետ(2023-11-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն | Հասարակական անվտանգության ապահովման և հանցավորության դեմ պայքարի ոլորտում քաղաքականության մշակման ու մոնիթորինգի բաժին | Ավագ մասնագետ, (27-33.1-Մ3-5)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. մասնակցում է հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների քաղաքականության մշակման աշխատանքներին.
2. իրականացնում է հանցավորության շարժընթացի, հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանման, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման վիճակի մասին վիճակագրական, վերլուծական և այլ տեղեկությունների հավաքագրումը.
3. մասնակցում է հավաքագրված տեղեկությունների հիման վրա հանցավորության և դրա դեմ տարվող պայքարի քաղաքականության արդյունավետության համալիր վերլուծության իրականացման և քրեածին իրավիճակի կանխատեսման աշխատանքներին.
4. իրականացնում է վերլուծությունների և կանխատեսումների արդյունքներով առկա մարտահրավերների ու ռիսկերի վերհանումը, դրանց չեզոքացման և օպերատիվ իրավիճակի բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը.
5. իրականացնում է անդրազգային և կազմակերպված հանցավորության տենդենցների ու դրսևորումների ուսումնասիրումը, վերլուծումը, դրանց հակազդման և զսպման արդյունավետ մեխանիզմների ու ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման համար առաջարկությունների ներկայացումը.
6. իրականացնում է ոստիկանության ստորաբաժանումները (թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թրաֆիքինգի, կիբերհանցավորության դեմ պայքարի և այլն) քրեաբանական ուսումնասիրությունների իրականացման համար նախատեսված

անհրաժեշտ ծրագրային համակարգերով, միջազգային պրակտիկայում կիրառվող այլ թվային տեխնոլոգիաներով հագեցնելու նպատակով անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացումն ու առաջարկությունների ներկայացումը.

7. մասնակցում է հասարակական անվտանգության ոլորտի զարգացման ռազմավարությունների մշակումն ապահովելու նպատակով օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրության ու վերլուծական աշխատանքներին.
8. մասնակցում է հասարակական անվտանգության ոլորտի զարգացման ռազմավարությունների մշակման աշխատանքներին.
9. մասնակցում է ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի, այլ ռազմավարական ծրագրերի՝ հասարակական անվտանգության ոլորտին առնչվող միջոցառումների մշակման աշխատանքներին.
10. մասնակցում է հաստատված ռազմավարությունների, ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի՝ ոստիկանության ստորաբաժանումների կողմից կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.
11. իրականացնում է մոնիթորինգի նպատակով ոստիկանությունից անհրաժեշտ տեղեկատվության և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրումն ու ուսումնասիրումը.
12. իրականացնում է մոնիթորինգի իրականացման արդյունքում հաշվետվությունների կազմումը, մասնակցում է ռազմավարական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասով առաջարկությունների մշակման և ներկայացման աշխատանքները.
13. մասնակցում է ռազմավարական ծրագրերից բխող հասարակական անվտանգության ոլորտի միջոցառումների իրականացման շրջանակներում, Նախարարի կամ ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հանձնարարությամբ, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մշակմանը և իրավասու կառուցվածքային ստորաբաժանմանը ներկայացման աշխատանքներին.
14. իրականացնում է հաստատված ռազմավարությունների կատարման արդյունքներով բաժնի ոլորտին վերաբերող հաշվետվությունների կազմումը.
15. մասնակցում է ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ գործունեության կազմակերպմանը միտված կառավարման և կազմակերպակառուցվածքային նոր մոդելների ու կոնցեպտների վերաբերյալ առաջարկների ներկայացման, նման նախաձեռնությունների ստացման դեպքում՝ դրանց ներդրման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության տրամադրման աշխատանքներին.
16. իրականացնում է հասարակական անվտանգության ոլորտին առնչվող ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության հանձնարարականների, պահանջների ժամանակին և պատշաճ կատարումը և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը.
17. իրականացնում է հասարակական անվտանգության ոլորտին առնչվող մեթոդական ուղեցույցների և ձեռնարկների, չափորոշիչների ու ստանդարտների մշակումը, ինչպես նաև արդյունավետ կառուցվածքի ու կազմակերպական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.
18. մասնակցում է Նախարարի կամ ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հանձնարարությամբ կառավարչական բնույթի հրամանների և ցուցումների նախագծերի նախապատրաստմանը՝ բաժնի գործառույթներին վերաբերող մասով:

Իրավունքները.

- համագործակցել Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների հետ.
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների խնդիրների լուծման նպատակով.
- մասնակցել հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտներին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին և այլ աշխատանքային հանդիպումներին.

- ստանալ ռազմավարական պլանավորման և իրականացման գործիքների ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը.
- նախարարության, նրան ենթակա պետական մարմինների նպատակների և խնդիրների ուսումնասիրման և դրանց վերանայման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.
- հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտների ծրագրերի ռիսկերի վերլուծության, գնահատման, մոնիթորինգի իրականացման, ինչպես նաև ընթացիկ հաշվետվությունների կազմման և վերջնարդյունքների գնահատման աշխատանքների իրականացման նպատակով ներկայացնել առաջարկություններ.
- ծրագրերի ղեկավարման գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

Պարտականությունները.

- ուսումնասիրել հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտների զարգացման հնարավոր սցենարների և ռազմավարական պլանների միտումները.
- ուսումնասիրել մշակված ռազմավարական պլանավորման իրականացման և ռազմավարական փաստաթղթերը, դրանց համար անհրաժեշտ տվյալները, ինչպես նաև կատարել այդ փաստաթղթերով նախատեսված միջոցառումները.
- ուսումնասիրել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների հեռանկարային զարգացման առաջնայնությունները և ռազմավարական հիմնական ուղղությունները.
- կազմել հաստատված ռազմավարությունների կատարման արդյունքներով Բաժնի ոլորտին վերաբերող հաշվետվությունները և ներկայացնել Բաժնի պետին.
- ներկայացնել առաջարկություններ հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտների ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանակման, միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակման և ներդրման համար.
- ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ սահմանված կարգով Բաժնի գործառույթներին առնչվող մասով տրամադրել տեղեկություններ.
- ուսումնասիրել մոնիթորինգի նպատակով ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված անհրաժեշտ տեղեկատվությունը, կատարված աշխատանքների վերաբերյալ կազմել հաշվետվություններ և ներկայացնել Բաժնի պետին.
- աջակցել հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտներում միասնական պետական քաղաքականության մշակման աշխատանքներին.
- մշակել Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտին ուղղված նպատակային ծրագրերը.
- ուսումնասիրել հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտներում ռիսկերի գնահատման և նվազեցման ուղղությամբ ռազմավարական վերլուծությունները.
- կազմել հաշվետվություններ հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի ոլորտներում գործունեության ռազմավարական, միջնաժամկետ, տարեկան ծրագրերի և միջոցառումների պլանավորման նպատակով.
- մշտադիտարկել հաստատված ռազմավարությունների, ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի՝ ոստիկանության ստորաբաժանումների կողմից կատարման ընթացքը.
- աջակցել միջազգային համագործակցության ռազմավարության աշխատանքներին.
- հավաքագրել տեղեկատվություն Բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման համար և ներկայացնել Բաժնի պետին:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն**:**

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: